

Թերևս յաջողի մեզ հետեւեալ համարում՝ Տաճկահայոց վարչական հաստատութեանց և գործող անձանց ցուցակը հրատարակել:

Յուսիկ Վարդապետ.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ.

Հանգուցեալ Տէր Գէորգ Գ. Վեհափառ Հայրապետի մահից յետոյ Ս. Սինօղը տարւոյս Մայիս ամսին նշանակած լինելով ընտրութեան ժամանակը, դեռ անցեալ 1883 թուի Հոկտ. ամսին ծանուցագրերն ուղարկեց լիճակները յանուն լիճակաւորաց, Ռուսաստանինը, եւ Պարսկաստանինը՝ ուղղակի իսկ Տաճկաստանինը՝ Թիֆլիզու Վլխաւոր Կառավարութեան միջոցաւ՝ Պատրիարքարանի ձեռքով:

Այդ ծանուցագրերի մէջ արգէն յիշուած է թէ լիճակները ինչպէս պէտքէ մասնակցեն ընտրութեան: Արարատի խմբագրութիւնը մինչև այսօր ոչինչ չըխօսեց մինչև որ իրան յայտնի յարակից հանգամանքները ստացան որոշ գրութիւն. մինչև որ Կ. Պօլսոյ Լիազոր Յանձնաժողովը վերջացնելով իւր պարապմունքը, իւր աշխատութեան արգիւնքը յանձնեց Ազգային երեսօթիանական ժողովի որոշմանը: Իսկ լիճակաւորութիւններից յետոյ ինչպէս երեւում է, Երեսօթիանական ժողովը որոշել է 1866 թուի Ընտրութեան եղանակով փարուել այս անգամ ևս: Այս բանը հաւաստում է նաև Պօլսոյ Պատրիարք Ամենապատիւ Տ. Ներսէս Արքազան Արքեպիսկոպոսի համար 189 ի 1-ն Յունարի տարւոյս գրութիւնը, ուղղեալն յանուն Ամենապատիւ կաթողիկոսական Տեղակալ Հօր և Սինօղականաց Ս. Էջմիածնի:

Յայտնի է որ 1866 թուին Կ. Պօլսից եկած պատգամաւորները ոչ թէ Ս. Էջմիածնի ընտրութեանը մասնակցեցին, այլ յայտնեցին Ս. Էջմիածնի ընտրող ժողովին ընտրեալի անունը. իսկ Ս. Էջմիածնի ժողովը ձեռնադրութիւնը պահպանելուց յետոյ, ստորագրեց ընտրութեան թերթին: Այս ձեռք ընտրութիւնը թէև չէր կարող օրինակելի ժողով լինել, սակայն ժողովականք նկատած դատուցին ընդունել այնպիսի բանաւոր պատճառներ ունենալով, որոնք այժմ հարկ չըկայ բացատրելու, մանաւանդ որ այլ ևս ժամանակ էլ չըկար ուրիշ կերպ փարուելու: Այս բանի առաջքը առնելու համար այս անգամ Սինօղը որոշեց առանձին առանձին ծանու-

ցագրով հրաւիրել բոլոր վիճակներից մի մի աշխարհական և հոգեւորական պատգամաւորներ և այս՝ թէ՛ Ռուսաստանի և թէ՛ Պարսկաստանի ու Տաճկաստանի համար:

Այդ տեսակ կարգադրութիւնը երկու հիմք ունէր, մի որ Ընդհանրական Հայրապետի ընտրութեանը կրճատակցէին բոլոր Հայք, միւս ևս այդ զանազան աշխարհներից եկած պատգամաւորները Ս. Էջմիածնում իրանց ստանձնած գործը կատարելուց յետոյ կրճատութային Մայր Աթոռի այժմեան դրութեան հետ, և իբրեւականատես վկայ հաւատարմութիւն կը հաղորդէին իրանց ուղարկողներին: Այսպիսով ժողովուրդը իւր Մայր Աթոռի մասին հաւատարմութիւն կը ստանար, իսկ Մայր Աթոռն էլ իւր Գահակալի ընտրութիւնը համազգային ժողովով կատարած կրտեսնէր:

Այս այսպէս լինելուց յետոյ, հաւատացած էր Միաբանութիւնս թէ 1866 թուի ընտրութեան եղանակը այս անգամ չէր գործադրուիլ և Տաճկահայոց երկու պատգամաւորները ի դիմաց 65 վիճակաց 130 ձայնի արտօնութեամբ ընտրելին իբրեւ ընտրեալ չէին առաջարկել: Միաբանութեանս խնդիրը այժմ ձայների քանակութեան համար չէ. Միաբանութիւնս ընդունումէ Տաճկահայոց 65 վիճակների գոյութիւնը. սակայն և ցանկանումէ որ ըստ նախնականոք սովորութեանց այդ վաթսուն և հինգ վիճակները մասնակցէին կաթողիկոսի ընտրութեանը Ս. Էջմիածնի Կաթողիկէ Մայր եկեղեցում ուրոյն ուրոյն հոգեւորական և աշխարհական պատգամաւորներով: Ըստ տրամադրութեան օրինաց պատգամաւորների այս մասնակցութիւնը կարող է լինել կամ անձամբ, կամ իւր ներկայացուցչի միջոցաւ, — ինչպէս արին Պարսկաստանեայք և Հնդկաստանեայք 1866 թուի ընտրութեան ժամանակ, — և կամ գրաւոր յայտնելով իրանց կարծիքը, թէ ո՞ր վիճակը իւր պատգամաւորի միջոցաւ ում է կամենում ընտրելի:

Միաբանութիւնս յարգումէ ամեն օրէնք և սահմանադրութիւն. եթէ Տաճկաստանի վիճակները կաթողիկոսի ընտրութեան գէպում ևս ազգային Սահմանադրութեան համեմատ իրանց ձայնը յանձնել են իրանց վիճակների Կ. Պօլսոյ Ազգային ժողովի երեսփոխաններին, — թող ուրեմն այդ երեսփոխանները անձամբ կամ գրաւոր և կամ քուէով իրանց վիճակի կողմից մասնակցեն Ս. Էջմիածնի Համագումար ժողովին:

Քուէով ասայինք, որ առանց կենտրոնացնելու մի անձի վերայ թող ընտրելեաց անուանց հետ ուղարկեն Ս. Էջմիածին, ուր Ս. Էջմիածնի Համազումար Ժողովի անդամք ըստ յարմարադատութեան՝ ընտրելեաց վերայ տայով իրանց քուէն, ընտրելիների ձայնից առաւելութիւն ստացողը համարուի Ընտրեալ Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Ամսագրոյս ներկայ համարում տպագրւումէ Ս. Էջմիածնի Սինոդի շրջաբերսկանը և Միաբանութեան Թուղթը ի 1-ն Փետրւարի յանուն Կ. Պօլսոյ Պատրիարք Ամենապատիւ Տ. Ներսէս Սրբազան Արքեպիսկոպոսի, այդ երկու թղթերից ևս ընթերցողք կեդրակացնեն այն՝ ինչ որ հարկաւորն է:

Հաւատանք և յուսանք որ Միաբանութեանս ձայնը լսելի կլինի և օրինականութիւն կստանայ. Միաբանութեանս՝ որ իւր ստանձնած կոչմամբ և պարտաւորութեամբ ընտրեալ Հայրապետի անմիջական իննամայն է ենթարկուելու և նորա կամքի ու տնօրէնութեան գործակատարն լինելու:

Յ.յս կոչումն ու պարտաւորութիւնը ըստ օրինի պէտքէ Միաբանութեանս ընդարձակութիւն տար կաթողիկոսի ընտրութեան գէպքում. բայց օրէնքի տրամադրութիւնը և ազգի ցանկութիւնը Միաբանութեանս համար սուրբ է և անսպայման՝ ընդունելի: Յուսով է Միաբանութիւնս թէ ազգն էլ իւր ցանկութիւնը ըստ արդարութեան և իրաւանց կը գործադրի՝ աչքի առաջ ունենալով Մայր Աթոռոյս ներկայ գրութիւնը, ազգային եկեղեցական գործերի բազմակնճիւղ գրութիւնը և լաւ եկեղեցականներ ունենալու անդիմադրելի պահանջը: Ա.յս ամենը կախուած են ընտրեալ Հայրապետի բարի ցանկութիւնից, իրաւացի կամքից և խորին խոհականութիւնից: Որից եթէ ազգը շահուի, Միաբանութիւնս ևս շահուած կըլինի իբրեւ մասն ազգի՝ միտթարուելով միանգամայն իւր ստանձնած կոչման պարտաւորութիւնը կատարելիս՝ իւր արդար դատաւորի հսկողութիւնը և գորովագութ Հօր իննամբն ու գթութիւնը իւր վերայ միշտ հովանի տեսնելով:

Ընտրեալ Հայրապետը բացի արդար դատաւոր, գորովագութ և իննամակալ Հայր լինելուց, իմաստուն անտես ևս պէտքէ լինի Մայր Աթոռս իբրեւ մեծ ուուն կառավարելու համար:

Հրաւիրադիր Սինոդի վասն ընտրութեան Կաթողիկոսի.

Սրբազնագոյն Հայրապետն մեր եւ Կաթողիկոսն սոմենայն Հայոց Տէր Տէր Գէորգ Դ. յետ վեշտասանամեայ Հայրապետութեան, անքննելի կամօքն Աստուծոյ փոխեցաւ յաստեացս ի 6-ն Գեկտեմբերի անցեալ 1882 ամի, թողլով թափուր զԱթոռ Կաթողիկոսութեան ազգիս եւ զմիաբանական ուխտ Սրբոյ Աթոռոյս ի վիշտս տրամութեան:

Մանուցեալ զայս գոյժ սգառիթ Զերումդ եւ Զեօք Համօրէն Հոգեւորական դասու եւ բարեպաշտօն Հայադգեաց Տիրախնամ քաղաքաց փիճակիդ, Սինոդս Սրբոյ Էջմիածնի Հրաւիրէ զԶերդ եւ զմիաբանական ուխտ Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ, ուղղել զջերմագին մաղթանս առ Քահանայապետն յաւիտենից Քրիստոս Հանգուցանել ի յոյս երեսաց իւրոց զՀոգի բարեյիշատակ Հայրապետին մերոյ եւ զմեզ—զորբացեալ զաւակունս Մօրն լուսոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի միլիթարեալ պահպանել օժանդակութեամբ եւ շնորհօք Ամենազօր Սուրբ Հոգւոյն:

Հնազանդեալ կամաց Ամենախնամ Արարչին, Սինոդս Սրբոյ Էջմիածնի յետ ամիսփելոյ ի Հոգ տապանի զնշխար Հոգելոյս Հայրապետին եւ զկնի Հոգալոյ զարժանն զեղանակէ անսայթաք առաջընթացութեան ներքին եւ արտաքին մասանց Կառավարութեան Սրբոյ Վանիցս, ունելով ի նկատի՝ զի ընտրութիւն նորոյ Պատրիարք Կաթողիկոսի ըստ զօրութեան ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Հաստատեալ կանոնադրութեան, պարտի լինիլ զկնի միոյ ամի, յօրէ մահուան Հայրապետին, այսինքն ի 6 երրորդ օր Գեկտեմբերի այսր ամի ի դառնաշունչ ձմերանի, յորում անհնարին լիցի Հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորաց ժողովել այսր ի Սուրբ Էջմիածին, մահաւանդ՝ զի եւ արդի սղութիւն դրամական միջոցաց Մայր Աթոռոյս եւ անյարմարութիւն բնակարանաց վանուցս Էջմիածնի եւ այլոց կարեւորաց ի պէտս վայելուչ ընդունելութեան հիւրոց եւ պատգամաւորաց, արգելս լինին կատարելոյ զընտրութիւնն ի 6-ն Գեկտեմբերի այսր ամի, ըստ զօրութեան օրագրական եզրակացութեան իւրոյ կայացելոյ ի 29 Գեկտեմբերի անցեալ 1882 ամի, Աի-

նօդս հարկ եւ արժան զատեաց յետաձգել զժամանակ ընտրութեան նորոյ Սրբազնագոյն Հայրապետի ց 7-որդ օր Մայիս ամսոյ առաջիկայ 1884 ամի, զորմէ եւ յայտնեալ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Կառավարութեան, ընկալաւ Սինօդս առ այն զհաստատութիւն նորին:

Արդ՝ զվերոյգրելոցն ամենից հասուցեալ ի գիտութիւն Ձերութեամբ եւ Քրիստոսասէր ժողովրդոց յանձն եղելոց Ձերութեամբ Հովուական խնամատարութեան, Սինօդս Սրբոյ Էջմիածնի յանձն առնէ Ձեզ ի ձեռն տեղական պետական քաղաքական իշխանութեան հրաւիրել զհայազգի ժողովրդականս, համաձայն սահմանեալ առ այն կանոնաց, առանձին իմն ազգասիրական եռանդեամբ, հոգևով միութարութեան, բարեպաշտութեան եւ սիրոյ ընտրել ի միջոյ իւրեանց զմի պատգամաւոր իբրեւ ներկայացուցիչ իւրեանց եւ զինի ընտրութեանն՝ հրաւիրել զընտրեալ պատգամաւորն գալ այսր ի Սուրբ Էջմիածին ընդ Ձերութեամբ որ էք ներկայացուցիչ համայն հոգեւորական դասու վիճակիդ եւ ներկայ գտանիլ աստ ի Մայր Աթոռս յ 7-րդ օր Մայիս ամսոյ առաջիկայ 1884 ամի, առ ի ընտրել ի համայն հոգեւորականաց Ազգիս, ճիշտ պահպանութեամբ ծիսից եւ սովորութեանց սահմանելոց առ այս ըստ օրինի, զարժանաւոր յաջորդ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի ի կառավարել զեկեղեցին Քրիստոսի եւ զՀայրապետական Թափուր մնացեալ Աթոռ Կաթողիկոսութեան ամենայն Հայոց, որպէս զի ընտրեալ գլուխն Սրբոյ եկեղեցւոյ մերոյ վարեսցէ զՀայրապետական իշխանութիւնն յամենայնի ըստ անստերիւր Աւետարանական վարդապետութեան եւ կանոնաց Սրբոց հարց ի պարծանս լրութեան ազգիս եւ ի պայծառութիւն եկեղեցւոյ մերոյ Սրբոյ: Եւ ի դէպս եթէ հանդիպիցիք արգելանաց անձամբ ներկայ լինել այսու նպատակաւ ի Սուրբ Էջմիածին, յայն դէպս բարեհաճեօք առարել ի ժամանակին զներկայացուցիչ Ձեր, զընտրեալն ի Ձէնք: Իսկ եթէ ըստ անակնունելի իմիք հանգամանաց եւ գիպուածոց, ոչ յաջողեսցի ոչ հոգեւոր ներկայացուցչի Ձերոյ եւ ոչ աշխարհական պատգամաւորին ընտրելոյ ի բարեպաշտ հայազգեաց վիճակիդ անձամբ գտանիլ աստ ի Սուրբ Էջմիածին ի ժամ ընտրութեան ի նշանակեալ առաքյ յայնժամ օւնիք դուր եւ աշխարհական պատգամաւորն զիրաւունս յայտնելոյ

զկարծիս Զեր եւ զորոշումն առ այն՝ թէ զո՞րք յեկեղեցականաց գտանէք դուք արժանաւոր այնմիկ վեհաստիճան Հայրապետական իշխանութեան, առաջարկել կանխաւ Սինոդիս գրաւոր խելթով, զի մի՛ արգելցի ընտրութիւնն ի նշանակեալ աւուրն ըստ նախասահմանեալ կարգին:

Ի կնիք վերոյգրելոցն ամենից Սինոդս Սրբոյ Էջմիածնի Հանդերձ օխտիւ միաբանութեան Սրբոյ Աթոռոյս՝ միջնորդութեամբ ամենայն սրբութեանց Հանգուցելոց ի տաճարիս, ամենաջերմեռանդն աղօթիւք առ Աստուած Հայցէ վասն Համայն սգազգեաց Հոգեւորականաց եւ բարեպաշտօն ժողովրդականաց Հայազնէից մեծաց եւ փոքունց բնակելոց ի վիճակիդ զերկար կեանս, զյաջողութիւն ամենայն բարենպատակ գործոց եւ զբարգաւաճութիւն ամենայն առաքինական ձեռնարկութեանց, պահպանելով զամենեսեան զնոսա ընդ Հովանեաւ Ամենազօր Աջոյն իւրոյ անլնաս յամենայն երեւելի եւ աներեւոյթ թշնամեաց ըստ Հոգւոյ եւ ըստ մարմնոյ:-- Ամէն:

Թուղթ Սիաբանութեան Սրբոյ Էջմիածնի Ըն-
Լան. Տ. Կերսէս Սրբազան Արքեպիսկոպոս
Պատրիարք Կ. Պօլսոյ:

ՆՈՐԻՆ ԸՄԵՆՈՊՈՏԻՒ ՍՐԲԱՋՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԿԻ ԿԱՅՈՅ Կ. ՊՕԼՍՈՅ

ՏԵՍՈՆ ՆԵՐՍԻՍԻ

ԳԵՐԶԴՅՈՆ ԱՐՀԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

Զգրութիւն Ամենապատիւ Սրբազան Տեառնդ, տողեալն ի 1-ն Յուն-
փարի տարւոյս ընդ Համարաւ 189. յանուն Ամենապատիւ կաթուղի-
կոսական Տեղապահի և Սրբազան Հարց Սինոդականացն՝ ընկալաւ Սի-
նոդն Սրբոյ Էջմիածնի, որ և ընթերցեալ եղև ի Համագումար ժողովի
անդ Միաբանական Ուխտի Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիած-
նի, որոյ և բովանդակութեանն քաջապէս խելամուտ եղեալ, առ որ
Միաբանական Ուխտս մեր հարկ ինքեան Համարի ամենախոնարհաբար
յայտնել Սրբազան Տեառնդ և շեօք Ազգային Երեսփոխանական ընդ-
հանուր պատկառելի ժողովոյն զիւրն համեստ կարծիս և զիրաւացի
նկատողութիւնս:

Սինոդն Սրբոյ Էջմիածնի յետ ցաւօք սրտի ծանուցանելոյ ընդհանրութեան Ազգիս զտիրահրաւէր փոխումն յաստեացս Սրբազնակատար Աւհապառ Հայրապետի և Ծայրագոյն Պատրիարք Աթուղիկոսի ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ Դ-ի, ապաքէն առ ի անվթար պահպանելոյ զգարաւոր ժամանակեայ առ մեզ հասեալ նախնաւանդ սովորութիւնս և զնուիրական սկզբունս կաթուղիկոսական համազգային ընտրութեան, մանաւանդ զի միաբանական բուն համերաշխութեամբ թերեւս և, առաւել ի լաւագոյն անդր նպատակ թեւակոխել մարթասցի, փութացաւ ըստ թուոյ ի Պատրիարքարանէն ցուցեալ վիճակաց առաքել ուրոյն ուրոյն զծանուցողական հրովարտակս, յորս և նշանակելով զօրն ընտրութեան, հրաւիրեաց զարժանայարգ եկեղեցական և զաշխարհական մի մի պատգամաւորս ի դիմաց իւրաքանչիւր վիճակի, գալ և ժողովել ի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ի Համագումար ժողովի անդ ազգային խումն պատգամաւորաց ի Տաճարի Սրբոյ Միածնաիջի, առնել զնորոգ ընտրութիւն արժանաւորի ուրուք յԱթոռ Հայրապետութեան Հայաստանեայց և յաջորդութիւն Մեծի Սրբոյն Գրիգորի Առաւորչի, ոչ զի այնու զնոր իմն օտարոտի նորալուր ընտրողական եղանակս և կարգս առաջարկելով, քան միշտ առաջարկեալ է յաւուրս ընտրութեանց երանաշնորհ հանգուցեալ Հայրապետացն ազգիս ներսիս, Մատթէոսի և Գէորգայ, եթէ ոչ զանցեալսն զամենեսին՝ որ ի Ձերոց ժամանակեցաց է դործ, եղաք առաջի Սրբազան Տեառնդ զօրինակսն զայնոսիկ:

Զի եթէ ի նախնեցեալ ժամանակս յայդպիսի դէպս լեալ են ակամայ խոտորումն և շեղումն ի նախնաւանդ ազգային սովորութեանց, այդոքիկ են բայց միայն տարադէպ բերմունք պատմական տխուր անցելոյ և դիպուածական բացառութիւնք, որք՝ զի եթէ մեք զարդիս ի մի յօդ ազգային սիրոյ և միաբանութեան լծորդեալք յառիցեմք ի միակ շահ Ազգիս լրութեան և Սրբոյ Մայր Աթոռոյս, միանգամայն չկարեն բնաւին խախտել զհիմնական նախնաւանդ սրբազան սկզբունս համազգային ընտրութեան, և ոչ եղանակն ընտրութեան 1866 ամի՝ զորմէ որպէս յիշէք ի գրութեան Ձերում կարէ լինել օրինակ, կամ ձեռնարկ հրահանգութեան և ի ներկայիս. « Եղանակ ընտրութեան », ասելով, ոչ զի բանք մեր են զառաւելազանցութենէ ձայնից վիճակաց Հայոց թուրքիոյ, զորս՝ ի սէր ազգային շինութեան և խաղաղութեան խորին հպատակութեան ջերմեռանդն համակրութեամբ և քաղաքագիտական իմն խոհականութեամբ մեք ամենեքեանս միմիայն ընդունիմք և յարգեմք և յարգեսցուք, բայց ոչ տիրող Պետութիւնն, որպէս կարծէ Սրբազնութիւնդ, զորմէ և յիշէք ի գրութեան Ձերում, զի մերթ ընդ մերթ յաճախեալ ի Սինոդն պաշտօնական թղթեանքն զայդ բան ընդհակառակն հաւաստեն, որպէս յանցելումն, նոյնպէս և ի ներկայիս: Այլ եթէ, Միաբանական Ուխտս մեր զեղանակ ընտրութեան 1866 ամի

գտանէ գլխովին անհամապատասխան բուն ոգւոյ սկզբանց և կանոնաց Համազգային ընտրութեան և ճիշտ օրինաւորութեան՝ —

Նախ զի՝ եթէ ի սկզբանէ անտի ի դարաւոր ժամանակաց հետէ հրաշափառ Տաճարն Սրբոյ Էջմիածնի ի Վաղարշապատ Ճանաչի Վաթուղիկէ և Մայր Եկեղեցեաց Հայաստանեայց, և Նստեալն ի Գերագահ Աթոռս Վեհափառ Հայրապետն ազգիս իբրեւ օրինաւոր արժանաժառանգ Աթոռակալ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, ապաքէն ըստ իրաւանց և արդարութեան և ըստ օրինաց Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ նա մանաւանդ ըստ վսեմութեան Համազգային նշանաւոր գործոյս սահմանադրեալ է և հարկ և արժան իսկ է, ապա ուրեմն ընտրեալ ազգային պատուարժան պատգամաւորաց մէն մի վիճակաց գալ և ի մի վայր ժողովիլ յԱյրարատեան Մայր Աթոռս և յետ նախապէս անձամբ ընդ իրեարս խորհելոյ և խօսելոյ զգրութեանէ ազգային Սրբոյ մեծի տանս և զկարեւորաց ընտրութեան առարկայից, յառաջագոյն ունելով ի նկատի զընտրելի արժանաւոր անձանց զանուանս, ապա համերաշխ սիրով և միաբանութեամբ անաչառապէս ձեռնարկել յընտրութիւն նորոգ կաթուղիկոսի ազատ և անբռնառատ քուէարկութեամբ, որպէս զի այնու մի՝ զի, կատարել խղճի մտօք զստանձնեալ պարտիս իւրեանց, և երկրորդ՝ յաչս օտարաց և ազգայնոց մերոց յարգել և բարձրացուցանել զվեհ նշանակութիւն ընտրեալ Ծայրագոյն և Ընդհանրական Գլխոյ Հայաստանեայցս Ազգի և Եկեղեցւոյ:

Երկրորդ, նոյնպիսի անցեալ ընտրողական ձեռնարկութիւնն երեսփոխանական ընդհանուր ժողովոյ է բացարձակապէս տարօրինակ և տարականոն իմն գործողութիւն. զի պատուարժան անդամք Ժողովոյն այնորիկ ըստ տրամադրութեան տեղական ազգային Սահմանադրութեան՝ եթէ են և համարին իբրեւ ընտրեալ և երաշխաւորեալ Երեսփոխանք ի գիմաց գաւառական ազգայնոց մերոց, որի Թուրքիա, Թերեւս չհամելով մեր մտանել ի մանրամասն լուսաբանութիւն իրաւանց և արտօնութեանց և շրջանի գործողութեանց նոցին, եթէ յոր դէպս ցոր աստիճան են, գիտելով զայն ամենայն քաջապէս՝ միայն զայս բան խորին հանդարտութեամբ կամիմք յիշել աստանօր, զի մինչ ըստ ազգային Սահմանադրութեան տեղւոյդ Երեսփոխանական ընդհանուր Ժողովն յընտրութիւնս Ծայրագոյն Պատրիարք Վաթուղիկոսի ամենայն Հայոց ունի զբացարձակ իրաւունս և արտօնութիւնս մասնակցելոյ, և այն ոչ այլ ուրեք, բայց միայն ի Համագումար Համազգային Ժողովի աստ ի Ս. Էջմիածին, զորպիսի իրաւունս և եթ միայն ստորասեմք, բայց բացասեմք և ժխտեմք պատկառելի Ժողովոյն զվերապահութիւնն նաև ընտրողական քուէարկութեան իրաւանց այդր ի Վ. Պօլիս, որ հակառակ իսկ է թէ նախնաւանդ մերոց կանոնաց և թէ բուն սկզբանց տեղական ազգային Սահմանադրութեան. զի այնուհետեւ եկեալ պատգամաւոր Հայոց Թուրքիոյ հրահան-

գեալ ի Ժողովոյն և օժտեալ միահաղոյն ի 130 ձայնից և քուէից
 գրեթէ վճռական և վերջնական զօրութեամբք, աստանօր զարտաքին և
 եթ կատարեն զձեականութիւն, ոչ զի նոքա զընտրելին՝ այլ արդէն
 զընտրեալն ի Կաթողիկոսութիւն առաջարկեն Ժողովոյն Ս. Էջմիած-
 նի, այն է պատգամաւորացն Հայոց Ռուսաստանի, Պարսկաստանի և
 Հնդկաստանի. զորոց և ընտրողական ազատ ձայնս յայդ դէպս առ
 ոչինչս համարեալ և գրեթէ իսպառ պարաւանդեալ ի խորին լռութիւնս,
 զերեսփոխանական Ժողովոյդ մասնաւոր կարծեցեալ ընտրութիւնն յա-
 նուն Համազգային Համագումար Ժողովոյ Ս. Էջմիածնի տան վաւե-
 րացուցանել ննրկայ հանդիսականացն. որպիսի տարականոնութիւն և
 բացարձակ ոտնահարութիւնքն դարաւոր սրբազան աւանդութեանց՝
 ահա յայնմիկ իսկ ազգային վեհագոյն նուիրական գործողութիւնս
 կաթողիկոսական ընտրութեան նկատեցան յամին 1866. Ուստի ամ-
 փոփելով աստէն զբանս մեր ամենախոնարհաբար խնդիր է Ուխտի Միա-
 բանութեանս ի ձէնջ ի Սրբազան Տեառնէդ մերմէ, զի զայն ամենայն ի
 վեր անդր բացատրեալ արդարացի նկատողութիւնս մեր ծանուցեալ ի
 գիտութիւն Երեսփոխանական պատկառելի Ժողովոյն, յորում և Սըր-
 բազան Տէրութիւն Ձեր զգահերեցութեան ունիք զաթոռ, փութաս-
 ցութք լծորդել ի մի յօդ միակամութեան և ազգային անարատ զգաց-
 մամբ յարգել և պաշտպանել թերեւս զառ ի նախնեաց անտի առ
 մեզ հասեալ զաւանդն սուրբ համազգային ընտրութեան և զցանկ հայ-
 բնեաց մերոց ևս առաւել հաստահիմն առնել ի շինութիւն և ի պայ-
 ծառութիւն և ի բարօրութիւն ազգի մերոյ և եկեղեցւոյ՝ առ որս են՝
 յուսամբ, բունն նախանձախնդիր նկրտումնք մեր ամենիցս ազգովին,
 Իսկ եթէ ոմանք ի պատուարժան պատգամաւորաց Հայոց Թուրքիոյ,
 ըստ ինչ ինչ անակնկալ պատճառանաց, անկարող գտցին անձամբ դալ ի
 ժամանակին ի Մայր Աթոռս և մասնակցել յընտրութիւն նորոգ Կա-
 թողիկոսի,— ըստ ի Սինօղէն Սրբոյ Էջմիածնի առաքեալ առ համօրէն
 վիճակս ծանուցողական հրովարտական հրահանգութեանց, որպէս
 օրինաւորութիւնն իսկ պահանջէ,— հարկ է նոցա ուրոյն ուրոյն զրա-
 ւոր վաւերական թղթովք պատգամաւորութեանց իւրեանց ի կողմանէ
 ընտրող վիճակացն, ընդ ձեռն Սրբազան Տեառնէդ մինչ ցօրն ընտրու-
 թեան յայտնել զբացարձակ կարծիս իւրեանց Սինօղին Սրբոյ Էջմիած-
 նի, զի ի ժամ համագումարման ընտրող ազգային Ժողովոյ առնուլ
 զայն ամենայն ի նկատողութիւն և ի կիրառութիւն, Ըստ այնո-
 ցիկ կարեւորագոյն իրաց, զոր ինչ Սրբազան Տէրդ մեր արժան հա-
 մարի տնօրինել, բարեհաճեցի տալ և զծանօթութիւնս զհետեւանացն
 միջոցաւ Սինօղին Սրբոյ Էջմիածնի, Միաբանական Ուխտի մեծի Մայր
 Աթոռոյս:

Ամենապատիւ Սրբազնութեանդ

Ողջ լինել մաղթեմք ի Տեառնէ

(Սրբաբարձր Սինօղի և Սինօղի)